# Թեման՝ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ



Դասընթացավար՝ Լիզա Սարդարյան
Արագածոտնի մարզի Կարինի մ/դ ուսուցիչ

Դասի թեման՝ Կանաչ դաշտը: Կերպարները

**7-րդ դասարան**



# Նպատակ՝

- Ձևավորել տեքստում ներկայացված հերոսների հույզերն ընկալելու, արարքները ներկայացնելու և վերլուծելու հմտություն
- Զարգացնել մեղիագործիքների տեսակներն ու դրանց առանձնահատկությունները տարբերակելու հմտություն
- Զարգացնել համագործակցային աշխատանքներ իրականացնելու հմտություն

# Վերջնարդյունք

- Տարբերակի պատմվածքի ժանրային հատկանիշները
- Նկարագրի պատմվածքի հերոսներին, վերլուծի հերոսների վարքագիծը ներկայացնող տողերը
- Արժևորի մարդ-բնություն կապը
- Գրագետ կիրառի տեղեկատվական ու թվային տեխնոլոգիաները և գնահատի համացանցը՝ որպես ուսումնական աշխատանքային տիրույթ:

Հ12, Հ13, Հ15, Հ16 Հ18, Հ24, Հ27, Հ28

## Խաչվող հասկացություններ՝

Օրինաչափություն, Պատճառ և հետևանք, Փոփոխություն և զարգացում

## Կարողունակություններ

Լեզվական, Սովորել սովորելու, Ինքնաճանաչողական և քաղաքացիական, Թվային մեդիա, Տնտեսական

## Միջառարկայական կապեր

Հայոց լեզու, ԹԳՀԳ, Կենսաբանություն, Աշխարհագրություն

# Դասի ընթացքը

## Քայլ 1.

**Տնային աշխատանքի ստուգում**



Դասարանը  նախապես բաժանվել է 2 խմբի և տրվել առաջադրանքներ.

**Աշխարհագետների խումբը**

Ներկայացնում է պատմվածքում պատկերված տարածաշրջանի՝ Լոռու մարզի բնակլիմայական պայմանները, անասնապահությունն ու գյուղատնտեսությունը տեղեկատվական տեքստով և լուսանկարներով՝ հղում տալով հավաստի աղբյուրին:



**Կենսաբանների խումբը**

Ներկայացնում է կենդանական աշխարհում միջտեսակային և ներտեսակային գոյության կռիվը (պատմվածքում պատկերված է միջտեսակային կռիվը գայլի և ձիու միջև), տեղեկատվական տեքստով և լուսանկարներով՝ հղում տալով հավաստի աղբյուրին:

# Ներկայացման միջոցներ՝

- ֆեյսբուքյան փակ խումբ
- Պադլետ (Padlet) էլեկտրոնային գրատախտակ
- Google Slides



# Առաջադրանք

**Քայլ 2**

Դասարանը բաժանել 4 խմբի՝

Բնութագրել հերոսներին՝

.Խումբ 1-Մայր ձի

.Խումբ 2-Քուռակ

.Խումբ 3-Գայլ

.Խումբ 4-Շուն

Մեթոդ՝ խճանկար







# Առաջադրանքի կատարման քայլաշար

**Քայլ 3.**

1. Դուրս բերել հերոսների վարքագիծը նկարագրող նախադասությունները և վերլուծել

2. Բերված փաստերը վերաշարադրել

3. Կատարել եզրակացություն

4. Արժևորել հերոսների բնավորության գծերը՝

| Դրական | Բացասական | Չեզոք |
| --- | --- | --- |
| | | |





# Անդրադարձ

**Քայլ 4.**

Օրինաչափություն-ներկայացնել Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» որպես պատմվածք. պատմվածքի ժանրին  բնորոշ ինչ հատկանիշներ ունի

Պատճառ և հետևանք-ներկայացնել պատմվածքի կոնֆլիկտի պատճառները և հետևանքները կենդանական աշխարհում

Փոփոխություն և զարգացում- ներկայացնել ձիու և գայլի կռվից գոյացած սև շրջանակի խորհրդանշական նշանակությունը և 3 տարուց կանաչով վերականգնումը



Տնային հանձնարարություն

## Քայլ 5.

Պատմվածքի ավարտին ձեր հովվի ու փոքրիկ հովվի զրույցը հարստացնել երկխոսություններով և ներկայացնել փոդքասթի միջոցով



# Օգտագործված գրականություն


1.Ա. Նիկողոսյան, Ա Վարդանյան, Անտարես, 2023,

2. «Մեդիագրագիտություն» ձեռնարկ դասավանդողների համար

3.ԿԶՆԱԿ, Ուսումնական նյութեր, 2021-2023

4.Մ.Մանասյան, Ա.Հովսեփյան, Աշխարհագրություն.Հայաստան-9

5.Է. Ա. Գևորգյան,Ֆ.Պ.Դանիելյան, Կենսաբանություն-11



# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ